

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի  
փետրվարի 24-ին

### «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-206 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9.1-ին հոդվածի 4-րդ, 9.3-րդ հոդվածի 7-րդ, 9.5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «հարկային մարմին» բառերով և դրանց հոլովաձևերով:

**Հոդված 2.** Օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «2016» թիվը փոխարինել «2018» թվով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

2016թ. մարտի 14  
Ստեփանակերտ  
ՀՕ-4-Ն